

Ապահով համացանց 2016



Անահիտ Կարապետյան

Թ 186 հիմնական դպրոց

Էկրանին համակարգչային ցուցադրությունն է:

Ուսուցիչ - Բարև Ձեզ: Յուրաքանչյուր տարվա 2-րդ ամսվա 2-րդ շաբաթվա 2-րդ օրը նշվում է Ապահով Համացանցի օրը: Հայաստանը միացել է Ապահով Համացանց համաեվրոպական նախաձեռնությանը 2008 թ-ից, իսկ հ. 186 դպրոցը՝ 2010-ից:

Քանի որ վաղուց արդեն համակարգիչը դարձել է հենց ձեր՝ աշակերտների դասապատրաստման գործիքներից, իսկ համացանցը՝ տեղեկություն ստանալու աղբյուրներից մեկը, այսինքն՝ քաջաձանոթ են համացանցին՝ առաջարկում եմ, որ դուք ասեք, թե ինչ է համացանցը, ինչ դրական ու բացասական երևույթներ եք նկատել աշխատելիս:

Լսում ենք պատասխանները և գրանցում գրատախտակին

Մեր դասի նպատակն է զինել ձեզ գիտելիքներով, որոնք ձեզ կապահովեն ձեր անվտանգությունը առցանց: Քննարկենք համացանցից օգտվելիս հանդիպող դեպքեր:

Հաղորդակցություն



Բեմականացում 1

Բջջային հեռախոսին հաղորդագրություն է գալիս--- լսվում է SMS-ի ստանալու ձայնը:

Աշակերտը ընթերցում է բարձրաձայն

«Դու այսօր Ջոնին տեսել ե՞ս: Նա այնքան անձաշակ էր հագնված: Չխոսես նրա հետ, թե չես կկարծեն, դուք ընկերներ եք»:

Աշակերտ 1 - Սովորենք ինչպես զեկուցել կատարվածի մասին և ինչպես պաշտպանվել:

- Պահեք ձեր հաղորդագրությունները, քանի որ դրանք կարող են ծառայել որպես ապացույց:
- Սովորեք ինչպես արգելափակել մարդկանց, ում հետ չեք ցանկանում շփվել:
- Տեղեկացրեք ձեր ծնողներին կամ ուսուցչին, եթե ինչ-որ մեկը ձեզ անհանգստացնում է տեքստային հաղորդագրությունների միջոցով:
- Մի մասնակցեք նկարներ կամ հաղորդագրություններ տարածելու գործին, որոնք կարող են ինչ-որ մեկին վիրավորել:



Խաղեր

Բեմականացում 2



Աշակերտը խաղ է խաղում, մայրը մոտենում է և ասում, որ դասերը պետք է պատրաստել, բայց աշակերտը խնդրում է, որ մի քիչ էլ խաղա, ապա ասում է , որ մի աշխարհ մնաց անցնելու, վերջապես կոպիտ է խոսում մայրիկի հետ:

Աշակերտ2 - Խաղը կախվածություն է ստեղծում, կարող ենք ի վերջո այնքան տարվել, որ ժամեր շարունակ չկտրվենք խաղից, չկատարենք տնային առաջադրանքները, անգամ մոռանանք հաց ուտելը և քնելը, մոռանաք ձեր

իրական կյանքի ընկերների մասին:

Կարող եք խաղ խաղալիս պատրաստ լինել ամեն ինչի, հաջորդ մակարդակ անցնելու կամ հաղթելու, անգամ խարդախելու:

Սոցիալական ցանցեր

Աշակերտ 3- սոցիալական կայքերը հնարավորություն են տալիս ստեղծել սեփական առցանց



տարածքը: Այստեղ մենք հնարավորություն ենք ստանում շփվելու նույն նախասիրությունն ունեցող մարդկանց հետ, կապնվելու աշխարհի բոլոր ծայրերի ձեր ընկերների և ընտանիքի անդամների հետ, տեղադրել նկարներ, գրուցել միաժամանակ մի քանի նարդկանց հետ, ուղարկել

հաղորդագրություններ և ցանկացած տիպի ֆայլեր: /skype, facebook ... / Բայց մինչև օգտվելը նախ պետք է գրանցվել ստեղծելով մեր նկարագիրը:

Բեմականացում 3

Նկարագիրը հետևյալն է /գրվում է գրատախտակին

Անուն, Տարիք, Հեռախոսի համար, Էլ. հասցե, Նկար

Առաջարկվող անուններ - 1.Նատալի կամ Նատալի Պետրոսյան, 2. Փիսիկ, 3. Թիթիզիկ

Ուսուցիչ - Անուն դաշտում ավելի հարմար է, երբ օգտագործում եք որևէ ծածկանուն, ձեր ընկերները այդպես էլ կճանաչեն ձեզ, քանի որ, դուք նախորոք կտեղեկացնեք նրանց այդ ծածկանունի մասին: Իրական անունը և ազգանունը գրելը դա ևս սխալ որոշում է:

Փիսիկ, Թիթիզիկ – նմանատիպ ծածկանունները ևս ցանկալի չեն: Մարդու ծածկանունը շատ բան կարող է ասել նրա մասին և անցանկալի մարդկանց ուշադրությունը գրավել:

Հիշեք, այն նկարները, որոնք դուք հրապարակում եք համացանցում, այլևս ձերը չեն, ցանկացած մեկը դրանք կարող է ներբեռնել և օգտագործել իր անունից, այսինքն ձեր նկարով բացել պրոֆիլ և գործունեություն ծավալել ձեր անունից:

Զրուցարաններ

Աշակերտ 4 - Մա այն վայրն է, ուր կարող ես մարդկանց հետ խոսել գրելու միջոցով, ընդ որում այդ գրատուները կարող ես տեսնել ոչ միայն դու, այլ մյուսները նույնպես: Նաև ոչ մեկը վստահ չի կարող ասել թե իրականում ում հետ է զրուցում ձեր տարեկից մեկի հետ, թե տարիքով մի վատ մտադրություններով անձի:

Բեմականացում 4 Նայենք էկրանին:



Աշակերտ 1 – Բարի գալուստ, Մայքլ:

Աշակերտ 2 – Ողջույն:

Աշակերտ 1 – Դու այս զրուցարանում նորեկ ե՞ս:

Աշակերտ 2 – Այո, այսօր եմ միացել:

Աշակերտ 1 – Ո՞րն է քո նախընտրած հայ նկարիչը:

Աշակերտ 2 – Մարտիրոս Սարյանը:

Աշակերտ 1 – Այո, ես էլ եմ սիրում Սարյանի կտավները:

Աշակերտ 2 – Որտե՞ղ ես ապրում: Կասե՞ս քո հասցեն:


Հարց դասարանին – Արժե արդյոք գրել ձեր բնակության հասցեն:



Պատասխան Եթե պատասխանը լինի „մասիվում,՝ դա թույլատրելի է, քանի որ ընդհանուր բնույթի տեղեկատվություն է, իսկ իրական հասցե – անթույլատրելի է:

Հարց դասարանին – Ո՞վ կարող է ասել, բակում զբոսնելիս ձեր անձնական տվյալները կտա՞ք անձանոթներին: Իհարկե՝ ոչ: Դա նույնն է ինչ պատահական մեկին ասել բջջայինի համարը կամ տան հասցեն: Գրառումներ կատարելիս նաև պետք է խստորեն պահպանել ուղղագրական և կետադրական կանոնները:

Ուսուցիչ -Թվային և առօրյա կյանքի կանոնները նման են, և դրանք պահպանելը միայն կօգնի ավելի արդյունավետ օգտվել համացանցից: Եկեք ավելի ապահով և պատասխանատու միանանք թվային աշխարհին:



Մեդիակրթության կենտրոնը ստեղծել է **Safe.am** վեբ պլատֆորմը:

Safe.Am- ում տեղադրված են Համացանցային գրագիտության ոլորտում առկա հայալեզու բոլոր ռեսուրսները: Կայքն ապահովում է նաև Հայաստանյան թեժ գծի աշխատանքը. թույլ է տալիս հավաքագրել տեղեկություններ համացանցային միջադեպերի մասին և ընթացք տալ քաղաքացիներից ստացվող բողոքներին: **Ներկայացնել կայքը, eSafetyKit խաղը:**

Թեստավորում “Ապահով համացանց” խաղի օգնությամբ



Ուսուցիչ- Իսկ հիմա, ամփոփենք. Հիմա ձեզ կբաժանեն բառեր, և դուք՝ կախված նրանից, թե այդ բառերը համացանցի դրական թե բացասական կողմերն են ներկայացնում՝ կփակցնեք դրանք կանաչ և կարմիր թղթերի վրա: “Դրական բառերը”՝ կանաչ թղթերի, իսկ “բացասական բառերը”՝ կարմիր: Ապա 7-րդ դասարանի աշակերտները ստուգելուց հետո դրանք կփակցնեն համապատասխան պաստառներին: Եթե ամեն ինչ ճիշտ եք կատարել, ուրեմն մենք հասել ենք մեր նպատակին և դասից ստացած գիտելիքները ձեզ զերծ կպահեն համացանցային վտանգներից:

